ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 64 (24617), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (۲۴۶۱۷) ٦٤ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՀԻՆԳՇԱԲԹԻ

4 ԱՊՐԻԼԻ 2024

پنجشنبه – ۱۶ فروردین ۱۴۰۳

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

Այաթ. Խամենէի.

«ԱՅՍ ՏԱՐԻԱՅ ՂՈԴՍԻ ՕՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՈՌԹԿՈՒՄ Է ԼԻՆԵԼՈՒ ՍԻՈՆԻՍՏ ԲՌՆԱԳՐԱՒԻՉ ՌԵԺԻՄԻ ԴԷՄ»

«ԱԼԻՔ» - Իսլամական յեղափոխութեան գերագոյն առաջնորդը երէկ ընդունել է երկրի եռեակ ուժերի ղեկավարներին, համակարգի պատասխանատուներին եւ քաղաքական, սոցիալական ու մշակութային դէմքերին:

Յեղափոխութեան առաջնորդի տեղեկատուական կայքէջի համաձայն՝ այաթ. Խամենէին հանդիպման ընթացքում երկրի մարդկային ու բնական կարողականութիւնները նպատակայարմար է բնութագրել ժողովրդի իրաւացի ակնկալիքները իրականացնելու համար եւ անհրաժեշտ համարելով ստեղծել մտաւորական էլիտաների մի խումբ որպէսզի

(Շար. 8-րդ էջում)

Իրանի Իսլամական խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորները դատապարտել են Իրանի հիւպատոսութեան դէմ սիոնիստական վարչակարգի յարձակումը

«ԱԼԻՔ» - Սիրիայում Իրանի հիւպատոսութեան շէնքի վրայ սիոնիստական վարչակարգի յարձակումը դատապարտելու առումով, Իրանի Իսլամական խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորները դատապարտանքի համատեղ յայտարարութեամբ են հանդէս եկել:

Յայտարարութեան մէջ, որը օրաթերթիս է տրամադրուել Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանի գրասենեակից նշուած է. «Պաղեստինի ժողովրդի եւ Դիմադրութեան ճակատի իրաւացի եւ ազատատենչ պայքարի պատմութեան մէջ, ընդմիշտ յիշուելու է Պաղեստինի եւ Գազայի ժողովրդի տառապանքն, անձնազոհութիւնը, խիզախութիւնները եւ տեղի ունեցած իրադարձութիւնները: Այս իրաւատենչ պայքարին անխախտ ձեւով ուղեկցում է Իրանի ժողովուրդը»: Յայտարարութեան մէջ նշուած է, որ սիոնիստական անբարոյ վարչակարգը եւ նրան հովանաւորողները իրենց ոճրագործութիւնների պատճառով ի վերջոյ արժանանալու են հազարաւոր կանանց, տղամարդկանց ու երեխաների անեծքին:

Յայտարարութիւնը այսպէս է շարունակւում. «Հարուած ստացած Իսրայէլը իր ոճրագործութիւնները շարունակելով, եւ իր սանձերը արձակած, գազանաբարոյ եւ բարդոյթաւորուած յարձակւել է մեր սիրելի Իրանի հիւպատոսարանի վրայ: Նման գազանային ակտերը, որը համարւում են լուրջ ոտնձգութիւն մի վաղեմի երկրի ինքնիշխանութեան նկատմամբ, խստագոյնս դատապարտելի է եւ անպատիժ չի մնալու: Մենք, Իրանի Իսլամական խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորներս եւ մեր համայնքների բոլոր անդամները, դատապարտում ենք սիոնիստների այս ոճրագործութիւնը եւ վստահ ենք, որ անպատիժ չի մնալու գեներալների, հրամանատարների եւ նրանց զինակիցների տմարդի սպանութիւնը: Երկրի եւ Դիմադրութեան ճակատի բոլոր սիրելիների նահատակութեան կապակցութեամբ, վշտակցութիւն յայտնելով Իսլամական յեղափոխութեան առաջնորդին, Իրանի եւ Սիրիայի ժողովուրդներին եւ նահատակների հարազատներին, չենք կասկածում, որ իրանցիների վճռակամութիւնը, եւ համախոհութիւնը ինչպէս միշտ վեհութիւն է ընծայելու»:

Յայտարարութիւնը ստորագրել են՝ Իրանի հրեաների պատգամաւոր Հոմայուն Սամեհ Եահը, Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Իրանի Զրադաշտների պատգամաւոր Էսֆանդիար Էխթիարին, Իրանի ասորիների եւ քաղդէականների պատգամաւոր Շաուլի Էնիէ Թէքիէն եւ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը:

ԳԻՐ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՁՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ



Յաւօք, վերջին օրերին հերթական անգամ ականատես եղանք Իրանի դէմ թշնամական սիոնիստական վարչակարգի ոճրագործութեանը, որի ընթացքում Դամասկոսում Իրանի հիւպատոսութեան շէնքում նահատակուեցին պարտադրուած պատերազմի ժամանակաշրջանի մի շարք վետերան գեներալներ եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան համակարգի այլ ռազմական խորհրդականներ ու կցորդներ:

Ուստի, խստօրէն դատապարտելով այս ոճրագործութիւնը, անձնապէս եւ յանուն մեր Կրօնական եւ Թեմական խորհուրդների ու ենթակայ մարմինների եւ ողջ ժողովականութեան, խորագոյն ցաւակցութիւններն ու կարեկցանքն ենք յայտնում երկրի հոգեւոր առաջնորդ այաթ. Խամենէիին, Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ այաթ. Ռէյիսիին, Իրանի ազնիւ ժողովրդին ու նահատակների ընտանիքներին:

Նշենք, որ ցանկացած յանցագործութիւն, որը խաթարում է Իրանի ու իրանցիների անվտանգութիւնն ու խաղաղութիւնը, դատապարտանքի է արժանի:

Այս առիթով նահատակների հոգիների համար առ Աստուած հայցում ենք աստուածային ողորմութիւն եւ մեծ համբերութիւն իրենց ընտանիքներին:

ԱՂՕԹԱՐԱՐ՝
ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի հետ Փաշինեանի բանակցութիւնների բովանդակութեան մասին ենթադրութիւններն ու իրականութիւնները

Հայաստանը յոյսերը կապելո՞ւ է երեք տասնամեակ շրջափակում թելադրած հարեւնի հետ

«ԱԼԻՔ» - Ըստ Caliber կայքի՝ ակնկալւում է, որ ապրիլի 5-ին Բրիւսէլում Ուրսուլա ֆոն դեր Լայենի եւ Անտոնի Բլինքէնի հետ Նիկոլ Փաշինեանի հանդիպման ժամանակ հաստատի Երեւանին քաղաքական, տնտեսական, ռազմական եւ հումանիտար օգնութեան ծրագիր՝ Հայաստանի ինտեգրումը եւրոատլանտեան տարածքում սկսելու համար: Ի թիւս նշուած ուղղութիւնների, սպասւում է, որ պայմանաւորուածութիւն ձեռք բերւի անվտանգային ոլորտում անմիջական համագործակցութեան շուրջ, որը Բաքւի կայքի գնահատմամբ լինելու է աննախադէպ ԱՊՀ երկրների

(Շար. 8-րդ էջում)

«Ժողովուրդ հայոց, անշուշտ լաւ հասկցաք, թէ զէնքն ի՛նչ կրնար գործել եւ կը գործէ: Ուրեմն, սիրելի եւ օրհնեալ հայաստանցիներ, գաւառացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինիք, ձեր բարեկամաց եւ ազգականաց իբրեւ պարգեւ մէկ-մէկ զէնք տարէք, զէնք առէք եւ դարձեալ զէնք»

Խրիմեան Հայրիկ (1820-1907),
հայոց 125-րդ կաթողիկոս, «Երկաթէ շերեփ»-ի անկրկնելի պատգամաբեր
Ապրիլի 4-ը Խրիմեան Հայրիկի ծննդեան օրն է

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհուրդն ընդունել է Հայաստանի ներկայացրած «Ցեղասպանութեան կանխարգելում» բանաձեւը



ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհրդի 55-րդ նստաշրջանում ապրիլի 3-ին կոնսենսուսով ընդունել է Հայաստանի կողմից ներկայացած «Ցեղասպանութեան կանխարգելում» բանաձեւը:

Ինչպէս «Արմէնպրէս»-ին տեղեկացրին ՀՀ արտաքին գործերի նախարարութիւնից, հիմք ընդունելով «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնւենցիան՝ երկու տարին մէկ ներկայացւող բանաձեւը ՄԱԿ-ի անդամ երկրների ուշադրութիւնն է հրաւիրում այս ոճրագործութեան կրկնութեան ռիսկերի եւ դրանք կանխելու անհրաժեշտութեան վրայ:

«Այս տարւայ բանաձեւի տեքստում, հաշի առնելով ժամանակակից մարտահրաւէրները՝ կարեւոր դրոյթներ են աւելացել վաղ նախազգուշացման եւ ցեղասպանութիւնների հետ կապած ռիսկերի վերաբերեալ: Մասնաւորապէս, նման ռիսկերի շարքում նշւում են զինուած հակամարտութիւնների օգտագործումը ցեղասպանութիւն իրականացնելու նպատակով եւ որպէս պատերազմ վարելու արգելւած միջոց խաղաղ բնակչութիւնը տովի մատնելու անթոյլատրելիութիւնը:

Բանաձեւն անպատժելիութիւնը որակում է որպէս ցեղասպանութիւնների, պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների ռիսկի զգալի գործօն՝ ընդգծելով, որ այն պէտք է հասցէագրւի հետաքննութեան, քրէական հետապնդման եւ պատժի միջոցով: Այս առումով յատկանշական է այն փաստը, որ բանաձեւը յատուկ նշում է Արդարադատութեան միջազգային դատարանի դերը ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ պատժի հարցերում:

Փաստաթղթով նախատեսւում է ՄԻԽ 58-րդ նստաշրջանում պանելային քննարկում անցկացնել վաղ նախազգուշացման թեմայով: Կոչ է արւում ՄԱԿ Մարդու իրաւունքների բարձր յանձնակատարի գրասենեակին քաջալերել ինչպէս անդամ պետութիւնների, այնպէս էլ ՄԱԿ ԳՔ Ցեղասպանութեան կանխարգելման հարցով յատուկ խորհրդականի, պայմանագրային մարմինների, յատուկ ընթացակարգերի, քաղաքացիական հասարակութեան, մարդու իրաւունքների ազգային ինստիտուտների, ակադեմիական շրջանակների եւ մասնաւոր հատուածի մասնակցութիւնը միջոցառմանը»,- ասւում է հաղորդագրութեան մէջ:

Ըստ աղբիւրի՝ Հայաստանի այս նախաձեռնութիւնը կարեւոր ներդրումն է ցեղասպանութիւնների եւ զանգւածային ոճրագործութիւնների կանխարգելման միջազգային օրակարգն ամրապնդելու, ժամանակակից մարտահրաւէրներին իրաւունքակենտրոն մօտեցումներ առաջադրելու, մարդու իրաւունքների միջազգային իրաւունքի եւ միջազգային հումանիտար իրաւունքի խաչւող խնդիրների շուրջ ինստիտուցիոնալ լուծումներ գտնելու ուղղութեամբ:

ՀՀ ԱԳՆ-ն կարեւոր է համարել նաեւ արձանագրելը, որ Հայաստանի կողմից ներկայացւած «Ցեղասպանութեան կանխարգելում» բանաձեւը վայելում է լայն աջակցութիւն. այն համահեղինակում են բոլոր հինգ տարածաշրջանային խմբերի անդամ հանդիսացող երկրները:

Սերգէյ Մելքոնեան.

«Ռուսաստանի եւ Իրանի հարցում ԱՄՆ-ի եւ Թուրքիայի շահերը տարածաշրջանում համընկնում են»

Տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերը կապւած են Ռուսաստանին տարածաշրջանից դուրս բերելու եւ այստեղ Իրանին իր դիրքերն ամրապնդել թոյլ չտալու հետ, եւ դա համընկնում է Թուրքիայի շահերի հետ:

Այս մասին News.am-ի «Ուժի գործօն» հաղորդման ժամանակ ասել է APRI Armenia-ի հետազօտող, միջազգայնագէտ Սերգէյ Մելքոնեանը:

«Միացեալ Նահանգները կարող է Հայաստանին անվտանգութեան երաշխիքներ տալ, բայց միայն՝ խօսքով: Ամերիկացի փորձագէտները պարզաբանում են, որ ԱՄՆ-ը չի կարող աջակցութիւն ցուցաբերել Հայաստանին՝ ընդդէմ Վաշինգտոնի դաշնակից Թուրքիայի»,- նշել է փորձագէտը:

Ըստ նրա՝ Հարաւային Կովկասում Արեւմուտքի գլխաւոր գործընկերը Թուրքիան է:

«Միեւնոյն ժամանակ, եթէ Թուրքիայի եւ Ադրբէջանի արտաքին քաղաքականութիւնն ուղղւած է տարածաշրջանից հայերին վտարելուն, ԱՄՆ-ը նման նպատակներ չի հետապնդում, նրա համար դա երկրորդական նշանակութիւն ունի:

Ադրբէջանը գրաւել է աւելի քան 200 քառակուսի կիլոմետր տարածք: ԵՄ առաքելութիւնը դա շատ լաւ տեսնում է, բայց ոչինչ չի ձեռնարկում: Սա նշանակում է, որ տեւել հարցը Եւրոմիութեան համար կարմիր գիծ չէ»,- յաւելել է Մելքոնեանը:

Նրա կարծիքով՝ հէնց որ Ռուսաստանի կողմից իր պարտականութիւններն ամբողջ ծաւալով չկատարելու, ինչպէս նաեւ Արեւմուտքի երաշխիքները բացակայութեան պայմաններում անվտանգութեան վակուում առաջանայ, Ադրբէջանը եւ Թուրքիան անմիջապէս կը փորձեն լրացնել այդ վակուումը:

«Հայաստանի իշխանութիւնների քաղաքականութիւնն ուղղւած է նրան, որ շրջադարձ կատարի դէպի Արեւմուտք, դուրս գա ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից եւ ինտեգրւի ԵՄ կառոյցներին, սակայն տարածաշրջանի երկրները, եւ ոչ միայն Հայաստանը, տնտեսապէս կապւած են Ռուսաստանի հետ:

Ուստի Արեւմուտքին դիմելու համար անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանքներ տանել եւ տնտեսական երաշխիքներ ստանալ: Առանց դրանց տնտեսական կոլապսի ռիսկեր կը լինեն»,- եզրափակեց փորձագէտը:

Վարդան Ոսկանեան.

«ՀՀ-ն որեւէ պարագայում չի կարող վերածւել հակաիրանական հարթակի»

Իրանի հարցերով ԱՄՆ յատուկ բանագնացի տեղակալ Աբրամ Փէյլին X սոցցանցի գրառումով, լուսանկարներով եւ տեսանիւթով ամփոփել է Հարաւային Կովկասի երկրներ կատարած այցերը:



Բանագնացը եղել է Հայաստանում, Վրաստանում ու Ադրբէջանում, հանդիպել տարբեր պաշտօնեաների հետ: Իր տեսանիւթում Փէյլին նշել է՝ պաշտօնական ու մասնաւոր հատուածների հետ քննարկել է Իրանի հանդէպ պատժամիջոցների պահպանման եւ Իրանի «ապակայունացնող վարքագծին ուղղւած ջանքեր»-ին առնչւող հարցերը:

168.am-ն իրանագէտ Վարդան Ոսկանեանից հետաքրքրւեց՝ արդեօ՞ք այս այցով ամերիկեան կողմը տարածաշրջանի երկրների առաջ հերթական պահանջն է դրել՝ Իրանին նոր պատժամիջոցներով ճնշելու համար: Ի պատասխան՝ իրանագէտը մանրամասնեց.

«Դատելով հանդիպումների մակարդակից՝ ակնյայտ է՝ գործ ունենք Իրանի հետ հարաւկովկասեան պետութիւնների յարաբերութիւնների տիրոյթի հետ: Այդ յարաբերութիւններում ԱՄՆ տարբեր երկրներում տարբեր խնդիրներ են հետաքրքրում:

Բնական է, որ Ադրբէջանի պարագայում գործ ունենք ակնյայտ հակաիրանական տրամադրութիւն ունեցող պետութեան եւ այդ պետութեան իշխանութիւնների հետ, ուստի այս տիրոյթում խնդիրը, հաւանաբար, գործողութիւններ կօրդինացնել է եղել: Մէկ այլ ուղղութիւն էլ կայ. գիտէք, Հիւսիս-Հարաւ ծրագրի շրջանակներում երկաթուղային կապի խնդիր է դրւած՝ յատկապէս այժմ, երբ ՌԴ-ն կարիք ունի այդ ճանապարհի, իսկ այդ Իրան-Ադրբէջան երկաթուղային հարցը, բնականաբար, չէր կարող չանհանգստացնել ԱՄՆ-ին, եւ կարծում եմ՝ դա եղել է Ադրբէջանում հանդիպումների օրակարգում»:

Վարդան Ոսկանեանը Վրաստանի պարագայում խնդիրն այդքան էլ արդիական չի համարում՝ նկատելով, որ Վրաստան-Իրան նախկին համագործակցութեան մակարդակն այսօր չկայ: Ըստ նրա՝ այլ հարց է Հայաստանը, քանի որ Հայաստանն Իրանի հետ ունի սերտ բարեկամական յարաբերութիւններ, ինչի մասին նոյնիսկ այս իշխանութիւններն են յայտարարել:

«Հայաստան-Իրան բարեկամական յարաբերութիւնները նպաստում են մեր պետութեան անվտանգութեան մակարդակի բարձրացմանը. ըստ էութեան, մեր հարաւային ահմանի եւ ընդհանրապէս ՀՀ Սյունիքի մարզի ու Ադրբէջան արհեստածին կազմաւորման միջեւ գտնւող հատուածում իրանական գործօնն է, որ շատ դէպքերում զսպում է Բաքւի բռնապետի ախորժակը՝ յարձակւելու այդ տարածքների վրայ: Դա իրանական կողմից արւում է գրեթէ ողջ գործիքակազմով սկսած հռետորաբանութեամբ եւ Բաքւի ու Անկարայի հետ տարւող դիւանագիտական աշխատանքով, վերջացրած՝ զօրավարժութիւններով,- նշեց նա՝ յաւելելով, որ հէնց այս անվտանգային դրւագը հաշի առնելով՝ պէտք է կառուցել հայ-ամերիկեան յարաբերութիւնները,- ՀՀ-ն որեւէ պարագայում չի կարող վերածւել հակաիրանական հարթակի»:

Արդեօ՞ք գործող իշխանութիւնները, որոնք հակւած են դէպի արեւմտեան հարթակներ, ի վիճակի են այդ քաղաքականութիւնն առաջ տանել՝ մեր յստակեցմանն ի պատասխան՝ Վարդան Ոսկանեանն արձագանգեց.

«Կարծում եմ՝ բոլոր ուղղութիւններով մենք ունենք տապալումներ, հետեւաբար, սին պատրանքներ պէտք չէ ունենալ, թէ ՀՀ ներկայիս կառավարիչներն այս տիրոյթում կը կարողանան կառավարել մարտահրաւէրն ու ռիսկերը, բայց մենք պէտք է ձեւակերպենք տեսլականը, որն է՝ ՀՀ-ն որեւէ պարագայում չպէտք է եւ չի կարող դառնալ բախումների հարթակ՝ թէ՛ տարածաշրջանային, թէ՛ համաշխարհային գերտէրութիւնների միջեւ. մենք հնարաւորութիւն ունենք մեր պետութիւնը դարձնելու ոչ թէ բախումների ու կոնֆլիկտների ասպարեզ, այլ համագործակցութեան տիրոյթ»:

Որպէս ասւածի օրինակ՝ իրանագէտը յիշեցրեց երկխօսութիւնների հարթակի վերածւած Կատարի նախադէպը:

Մեր զրուցակիցը նոյն մեսիջներն ուղղեց նաեւ ՌԴ առնչութեամբ՝ պարզաբանմամբ, որ ՀՀ-ն չի կարող շռայլութիւն թոյլ տայ դառնալ հակառուսականութեան հարթակ. դա ուղղակի չի բխում մեր շահերից:

«Այստեղ եւս մենք պէտք է փորձենք արդի աշխարհում, շատ բարդ միջպետական յարաբերութիւների տիրոյթում, ըստ էութեան, կանոնների բացակայութեան պայմաններում, ապահովել մեր պետութեան, ազգի անվտանգութիւնը: Դա է պետութիւն կառավարելու տրամաբանութիւնը. պետութիւն կառավարելը միայն ծառայողական մեքենաներից օգտւել չէ»,- ամփոփեց Վարդան Ոսկանեանը:

Երեւանն ու Մոսկւան վիճաբանում են, բայց ամուսնալուծութիւնը դեռ տեսանելի չէ

Հայ-արեւմտեան յարաբերութիւնների ուղու վրայ նոր բազմաքայլ ինտրիգ է ստեղծւում: Դրա սկիզբը նշել է ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի քարտուղար Մեթիւ Միլլերը: Բրիֆինգի ժամանակ նա յայտարարել է՝ «Մենք շարունակում ենք խրախուսել տարածաշրջանում (Անդրկովկասում) արդար եւ արժանապատիւ խաղաղութեան համար պայմանների ստեղծումը, եւ «կայուն խաղաղութիւն ապահովելու միակ միջոցը բանակցութիւնների սեղանն է»: Բայց միեւնոյն ժամանակ նա յաւելել է՝ «չկան ոչ մի դիւանագիտական բանակցութիւններ, որոնց մասին կարելի է ազդարարել»:

Բայց չէ՞ որ ապրիլի 5-ին Բրիւսէլում հանդիպում է նախատեսւած Հայաստանի վարչապետի, Բլինքէնի եւ Ուրսուլա ֆոն դեր Լայենի մասնակցութեամբ: Ստացւում է՝ ԱՄՆ-ն այդ գագաթնաժողովը դուրս է բերում Բաքւի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման կոնտեքստից: Թերեւս պատահական չէ, որ հէնց այս պահին Հայաստանի արտգործնախարարն արգենտինական Todo Noticias հեռուստաալիքին տւած հարցազրոյցում յայտարարել է՝ «Մենք հաւատում ենք՝ Ադրբեջանի հետ խաղաղութեան պայմանագրի հասնելը հնարաւոր է», բայց «կան բարդութիւններ, կան խնդիրներ»:

Ըստ Արարատ Միրզոյեանի՝ գլխաւոր բարդութիւնը հետեւեալն է. տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչում, Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանների սահմանազատում՝ 1991 թ. Ալմա - Աթայի հռչակագրի հիման վրա: Ստացւում է՝ Նիկոլ Փաշինեանին անցած տարւայ աշնանը Պրագայում Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնը ճանաչելու մասին փաստաթուղթ ստորագրելով՝ գործել է միակողմանի՝ իր ուսերից գցելով Լեռնային Ղարաբաղի խնդիրները: Ճիշտ է, այդ ակցիան որոշակիօրէն ակտիւացրել է Ադրբեջանի հետ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւնները փակ հարթակներում, որոնք դարաբաղեան երկրորդ պատերազմից յետոյ արդէն չորս տարի ոչ մի արդիւնք չեն տւել, իսկ Բրիւսէլում կայանալիք գագաթնաժողովին, առաւել եւս առանց Ադրբեջանի մասնակցութեան, խաղաղութեան պայմանագրի խնդիրը չի դիտարկւի: Ի՞նչ է ստացւում:

Ռուս փորձագիտական եւ քաղաքական շրջանակներում վարկած կայ, ըստ որի՝ Երեւանը ձգտելու է հարցեր բարձրացնել եւ հասնել իր տնտեսական անվտանգութեան փաստաթղթային ձեւակերպմանը ԵՄ-ի հետ համագործակցութեան ակտիւացման միջոցով՝ խաղարկելով ռուսական «խաղաքարտը»: Այդ խնդիրները հէնց Եւրոյանձնաժողովի եւ ֆոն դեր Լայենի իրաւասութեան ներքոյ են: Ըստ Նիկոլ Փաշինեանի՝ «Հայաստանը պատրաստ է մերձենալ Եւրոմիութեանը այնքանով, որքանով ԵՄ-ն դա հնարաւոր է համարում»: Եւ կրկին պատահական չէ, որ Արարատ Միրզոյեանը նման իրավիճակում որոշեց յիշեցնել, որ «չնայած տնտեսական սերտ յարաբերութիւններին, Երեւանի եւ Մոսկւայի միջեւ խնդիրները հնարաւոր չէ թաքցնել, եւ նրանց միջեւ տարաձայնութիւններ կան»:

Ինչ վերաբերում է Բլինքէնի գաթնաժողովին մասնակցելուն, ապա դա բացատրւում է Հայաստանի հետ ՆԱՏՕ-ի յարաբերութիւններ մշակելու ԱՄՆ ձգտմամբ, թէեւ Արարատ Միրզոյեանն ասում է՝ «Երեւանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հարց չի դրւում»: Դրանից հետեւում է եւս մէկ հետեւութիւն. ԵՄ-ն ի վիճակի չէ հանդէս գալ որպէս Հայաստանի անվտանգութեան երաշխաւոր, իսկ ԱՄՆ-ն, ըստ Միլլերի, չի դիտարկում, գուցէ հանել է այդ հարցը եւ դժւար թէ Բլինքէնը Նիկոլ Փաշինեանին «պատիրի» Հայաստանից ռուսական բոլոր ռազմական կառոյցների ամբողջական դուրսբերումը:

Մեկնաբանելով նման իրավիճակը՝ Ադրբեջանի նախկին արտգործնախարար, քաղաքագէտ Թոֆիկ Զուլֆիգարովը պնդում է, որ «Երեւանը տարօրինակ խաղ է վարում» եւ կոչ է անում Բաքւին «չշտապել հաշւել Մոսկւայի հետ Երեւանի հայկական տարբերակով ամուսնալուծութեան» դիւիդենտները», ամպագոռգոռ եզրակացութիւններ «չանել այն բանից, որ «Զւարթնոց օդանաւակայանից մի քանի տասնեակ սահմանապահ-անվտանգութեան աշխատակիցներ հեռացւում են», եւ յայտարարութիւններ են հնչում անգամ ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցութեան մասին»: Ըստ Զուլֆիգարովի՝ Երեւանը լռում է հետեւեալ կէտերի շուրջ՝ Գիւմրիում տեղակայւած ռուսական ռազմաբազա, «Զւարթնոց»-ում տեղակայւած աւիախումբ, համատեղ հրամանատարութիւն ունեցող հայ-ռուսական զօրքերի համատեղ խումբ, համատեղ ՀՕՊ՝ միասնական հրամանատարութեամբ, Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ջոկատներ, որոնք հսկում են Հայաստանի բոլոր սահմանները, այդ թւում՝ Ադրբեջանի հետ «պայմանական»: Վերջապէս, հարիւրաւոր տնտեսական պայմանագրերի մասին, ներառեալ բազմակողմ պայմանագրերը ԵԱՏՄ եւ ԱՊՀ շրջանակներում:

Նշելով նաեւ հայկական բանկերի որոշումը դադարեցնել «Միր» քարտերի սպասարկումը «ԱՄՆ-ի անանախադէպ ճնշման եւ պատժամիջոցների սպառնալիքների» արդիւնքում, «Ռուսաստանն ու Հայաստանը կը շարունակեն աշխատել ռիսկերի հեջաւորման եւ բանկային ոլորտում իրավիճակի շտկման ուղղութեամբ», յայտարարել է Հայաստանի խորհրդարանում տարածաշրջանային եւ Եւրասիական հարցերի յանձնաժողովի նախագահ Վաղարշակ Յակոբեանը: Ընդորում, Ռուսաստանը սուր եւ բացասաբար է արձագանգում Երեւանի բացայայտ դեմարշներին, բայց միայն բանաւոր պարսաւանքների մակարդակով, ասում է խորհրդարանականը, նա սպասում է, որ ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն չեն կարող

(Շար. 6-րդ էջում)

Լոյս է տեսել ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2024 թ. երրորդ համարը



Համացանցի էջին խմբագրութիւնը ներկայացրել է «Դրօշակ»-ի 2024 թւականի մարտեան համարը: Համարի «Առաջնորդողի» խորագիրն է «Ոտատակ ընկած Նիկոլ, ոտատակ եղող Հայաստան», ինչը ճշգրտօրէն արտայայտում է այսօրւայ Հայաստանի ղեկավարի քաղաքական վարքը, ինչի հետեւանքն էլ աշխարհաքաղաքական վտանգաւոր գործընթացների հորձանուտի մէջ ընկղմւող մեր երկիրն է:

Ի դէպ, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն օրեր առաջ յայտարարութեամբ անդրադարձաւ իշխանութիւնների կործանարար քաղաքականութեանը, մասնաւորապէս, Արցախից յետոյ այժմ էլ Հայաստանից տարածքներ զիջելու անհեռատես եւ անպատասխանատու գործունէութեանը: Նշւած յայտարարութիւնը նոյնպէս ներկայացւած է «Դրօշակ»-ի այս համարում:

Եթէ իշխանութիւնները ամէն ճիգ ու ջանք գործադրում են փակելու, մոռացութեան մատնելու Արցախ էջը, ապա ազգային եւ բանական հայ մարդկանց համար անընդունելի պէտք է լինի ազգային շահերի ոտնահարման այս բացայայտ դաւաճանական քայլը: «Դրօշակ»-ը սոյն համարում մի քանի յօդւածով անդրադարձել է Արցախի հարցին իրաւաքաղաքական տեսանկիւնից, քննելով թէ՛ այսօր Հայաստանի Հանրապետութիւնում ապաստանած արցախահայութեան առջեւ ծառացած իրաւական բնոյթի խնդիրները, թէ՛ անդրադառնալով Արցախի Հանրապետութեան նկատմամբ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններին: Այս շարքում ուշագրաւ է նաեւ պատմաբան Արմէն Մարուքեանի յօդւածը, որն անդրադարձ է միջազգային ասպարեզում Արցախի հարցի հետապնդման իրաւական հիմքերին:

Մօտենում է ապրիլի 24-ը, որն իհարկէ կարեւոր առիթ է, թէեւ առանց յատուկ առիթի էլ Յեղասպանութեան եւ նրանից բխող Հայ Դատի խնդիրները երբեք չպէտք է դուրս դրւեն հայկական օրակարգերից:

«Դրօշակ»-ի այս համարում, մի քանի հեղինակներ, տարբեր դիտանկիւններից անդրադարձել են այս չսպառող ցաւոտ թեմային:

«Դրօշակ»-ի «Ընկերական զրոյցների» շարքը մշտապէս ներկայացնող գրող-հրապարակագիր Վրէժ Արմէնը այս անգամ անդրադառնում է մի երեւոյթի, որը կարելի է կոչել «հասարակական մեր կեանքը կարգաւորող կանոններ» մասնաւորեցնելով ասելիքը «մեր ինքնութեան պահպանման» կանոնների եւ թելադրանքների վրայ:

Ինչպէս միշտ ընթերցողը ակնարկւած նիւթերի կողքին կը գտնի այլ հետաքրքրական յօդւածներ եւս: «Դրօշակ»-ի 2024թ երրորդ համարը համացանցում կարող եք գտնել droshak.am հասցեի ներքոյ:

«Դրօշակ» թիւ 3, 2024 թ.

Արթուր Խաչատրեան.

«Փաշինեանն արագ կաթոռազրկւի սոցիալական ցնցումներով. դա կանխելու համար է Եւրոպան ուզում փող տալ»

Բրիւսէլում ապրիլի 5-ին կայանալիք Նիկոլ Փաշինեանի Միացեալ Նահանգների պետքարտուղար Էնթոնի Բլինքէնի եւ Եւրոյանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հանդիպումից Հայաստանի անվտանգութիւնն ապահովելուն միտւած ռեալ քայլեր ակնկալող շրջանակների համար Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեանը յիշեցնում է՝ այս մարդիկ այն նոյն պաշտօնեաներն են, որոնք որեւէ գործնական քայլ չեն արել Ալիեւին սաստելու համար, հետեւապէս՝ ապրիլի 5-ին կայանալիք հանդիպումն ընդամէնը Հայաստանին մի քիչ փող տալուն նւիրւած հանդիպում է լինելու, ուրիշ ոչինչ:

168 TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում, անդրադառնալով Բրիւսէլում կայանալիք հանդիպմանն ու դրանից հանրութեան մի հատւածի ակնկալիքներին, Խաչատրեանը պարզաբանեց.

«Խօսում են Հայաստանի տնտեսական դիմակայունութեան բարձրացման մասին: Դա նշանակում է, որ առաջարկում են գումար տրամադրել Հայաստանին, որպէսզի Հայաստանում սոցիալական ցնցումներ չլինեն, ինչը կը բերի Փաշինեանի աթոռազրկմանն անմիջապէս: Եւրոպան եթէ այսօր իր բոլոր դռները բացի Հայաստանի առաջ, միեւնոյն է, Փաշինեանի իշխանութեան վարած քաղաքականութեան հետեւանքով Հայաստանի տնտեսութիւնը Եւրոպա արտահանելու ոչինչ չունի: Այո՛, Եւրոմիութիւնը քաղաքական կառոյց է, կարող է դռներ բացել, բայց հարց է՝ կարողանալո՞ւ են արդեօք օգտւել այդ հնարաւորութիւնից. չէ՞ որ սրանք ա մբողջ արդիւնաբերութիւնը սպանեցին, եւ հարց է առաջանում՝ ի՞նչ են արտահանելու Եւրոպա, երբ մեր երկրի բուն արդիւնաբերութիւնն ու գիւղատնտեսութիւնը ջախջախել են»,- ասաց Խաչատրեանը:

Նրա մեկնաբանութեամբ՝ Եւրոպան կարող է Հայաստանին փող տալ, ինչպէս խոստացաւ տալ 2.6 միլիարդ դոլար, Հայաստանի իշխանութիւնը 6 տարի անց Եւրոպայից ընդամէնը կէս միլիարդի չափ գումար է կարողացել ստանալ:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորի համոզմամբ՝ Հայաստանի իշխանութիւնը չի կարողանում կլանել խոստացած գումարը, բայց մի խնդիր է՝ Եւրոպան կը բացի՞ դռները Հայաստանի առաջ, մէկ այլ հարց՝ որքանո՞վ կը կարողանայ օգտւել այդ հնարաւորութիւններից այս Կառավարութիւնը, հետեւապէս՝ յստակ է մէկ բան՝ քաղաքական առումով Եւրոպան իր համար նոր դաշնակիցներ է փորձում գտնել՝ ընդդէմ Ռուսաստանի, իսկ թէ ի՞նչ է ստանում Հայաստանը դրանից, անհայտ է:

«Ակնկալել, թէ Արեւմուտքը յանկարծ պատրաստ կը լինի Հայաստանին ռազմական աջակցութիւն ցոյց տալ, անիմաստ է: Փաշինեանը մեր երկիրը հասցրել է այս ծանր վիճակին: Այս ամբողջ բորշչի պատասխանատուն հէնց ինքն է: Փաշինեանի սաղմոսներով շնորհաւորանքները նշանակում են, որ Փաշինեանը սեփական եկեղեցին է ուզում ստեղծել՝ առաջնորդելով ամէն ազգայինը ջարդելու մոլուցքով: Այն մարդը, որը պատասխանատու է երկրի համար, երկիրը բերել-հասցրել է այն վիճակին, որ ոչ մի կողմից չենք ստանում գործուն աջակցութիւն»,- ասաց Խաչատրեանը՝ ընդգծելով նաեւ, որ այն, ինչ չորս տարի ընդդիմութիւնն ասում էր, դրան չհաւատացող մարդիկ հիմա նոր սկսել են հասկանալ, եւ տեսանելի է անվտանգային խնդիրների վերաբերեալ մարդկանց տրամադրութիւնների փոփոխութիւնը:

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ-ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ



Աւագ Ուրբաթը Յիսուս Քրիստոսի չարչարանաց, խաչելութեան, մահուան ու թաղման յիշատակութեան օրն է: Այդ օրը առաւօտեան շատ կանուխ եկեղեցիներում կատարւում է Խաչելութեան կարգ, որի ընթացքում կարդացւում են Յիսուսի՝ Պիղատոսի մօտ տարուելու, Գողգոթայի վրայ խաչուելու, մահուան, արեւի խաւարման աւետարանական հատուածները:

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ նախատօնակի արարողութեան ընթացքին «Թաղման կարգ» է կատարւում, երբ Յիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ դրւում է եկեղեցու դասում ի տես հաւատացեալ ժողովրդի:

Աւագ Ուրբաթը հանդիսանում է մարդացեալ Աստուածորդու Յիսուսի իբրեւ «Խոնարհ ծառայ»-ի եւ զոհի երկրաւոր կեանքի, առաքելութեան, տառապանքի ու չարչարանքների աւարտն ու պսակումը, որը սակայն վերջակէտը չէր Քրիստոսի առաքելութեան:

Այս օրւայ առիթով ուրբաթ, մարտի 29-ին, Թեհրանի բոլոր եկեղեցիներում, առաւօտեան տեղի ունեցաւ կարգ չարչարանացի, եւ երեկոյեան կատարւեց Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի կարգ թաղման արարողութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը նկատառելի թւով հաղորդակցւելով օրւայ խորհրդին, իր յարգանքը մատուցեց Տիրոջ գերեզմանը խորհրդանշող դագաղին:

Ս. Սարգիս եկեղեցում հոգեպարար արարողութեանը նախագահեց եւ յաւուր պատշաճի հաւատաւոր ժողովրդին իր հայրական պատգամը փոխանցեց թեմական առաջնորդ Տ. Մեսրուի արք. Սարգսեանը իսկ Հոգեշնորհ Տ. Աւետիք վրդ. Տէր Կարապետեանը կրօնական արարողութիւնը նախագահեց Սրբոց Թարգմանչաց եկեղեցում:

Սրբազան Հայրն իր քարոզի սկզբին ասաց. «Երեկոյեան այս արարողութիւնը, որը յատկանշում է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ թաղումը, մեր եկեղեցւոյ եւ Քրիստոնեայ բոլոր եկեղեցիների ամենախորհրդաւոր, իմաստալից եւ հոգին հարստացնող արարողութիւնն է: Մեր հայրերի բարբառով, այն որ անբաւելի էր երկնքի եւ երկրի մէջ այսօր նորափոր գերեզմանի մէջ ամփոփուեցաւ: Նա, ով Իր էութեամբ ստեղծեց տիեզերքը եւ ամբողջ տիեզերքի Տէրն էր, այսօր նորափոր գերեզմանի մէջ ամփոփուեցաւ»:

Սրբազան Հայրն շարունակեց. «Մահը չարիք է աշխարհին եւ ընդհարապէս խորհրդանիշ է չարութեան, ատելութեան եւ հալածանքի եւ երբ մենք կատարեցինք թաղման խորհուրդը, իրականութեան մէջ թաղեցինք չարը, տառապանքը, նեղութիւնն ու ատելութիւնը եւ երրորդ օրը՝ Քրիստոսի Հրաշափառ Յարութեան հետ Յարութիւն պիտի տանք մարդուն եւ նոր կեանքին, որ մեզ պիտի առաջնորդէ յաւիտենականութեան, հետեւաբար մենք էլ այսօր խոնարհւում ենք եւ խնդրում ենք, որ նա մեզ արժանացնէ, որ մենք էլ Իր թաղման հետ մեր մէջ թաղենք բոլոր այն զգացումները, որոնք չար են, որոնք մեզ հեռացնում են իրարից եւ որոնք մեզ հեռացնում են Աստծուց նաեւ խնդրում ենք, որ Իր յարութեամբ մեզ մէջ նոր կեանք դնէ, որը մեզ պիտի առաջնորդէ մահուանէ կեանքի՝ մեզ պիտի առաջնորդէ ի մահուանէ ի կեանս յաւիտենից»: «Աղօթենք, որ Աստուածային օրհնութեամբ մենք էլ արժանի լինենք Իր թաղմամբ եւ յարութեամբ նոր կեանքի արշալոյսը վայելենք եւ կարողանանք մենք էլ միմեանց աւետել՝ Քրիստոս Յարեաւ ի մեռելոց: Աստուածային օրհնութիւնը ձեզ բոլորին» Ամէն:

Ազգային առաջնորդարանի
Հանրային կապի գրասենեակ

Սուրբ եւ անմահ պատարագի մատուցմամբ Սպահանի հայոց թեմի եկեղեցիներում նշուեցին Ճրագալոյցի եւ Ս. Յարութեան տօնները



Շաբաթ՝ մարտի 30-ի երեկոյեան, Ս. Յարութեան տօնի Ճրագալոյցը նշուեց Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եւ Ս. Յովհաննու Կարապետ, իսկ Շահինշահիր Սրբոց Վարդանանց եկեղեցիներում: Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան արք. Քէչէճեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու արարողութեանը, ուր պատարագիչ հայրն էր Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը:

Ընթացքում որպէս քարոզ Սրբազան Հայրն ընթերցեց Ս. Յարութեան տօնի առթիւ իր պատգամը: Սրբազան Հօր պատգամը ընթերցուել է նաեւ վերոնշեալ միւս եկեղեցիներում:

Ահա մի հատուածի մէջբերում սոյն պատգամից.

«Թող որ մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշագործ յարութիւնն արթնութեան առիթ հանդիսանայ մեզ համար, որպէսզի սթափուենք մեր ներկայ կործանարար վիճակից, փոխենք մեր մեղսալից կեանքը, զղջանք ու ապաշխարենք, կասեցնենք ազգակործան ու հայրենակործան գործընթացը, ընտրենք բարեգործութեամբ առլեցուն աստուածահաճոյ կեանք եւ մանաւանդ վերականգնենք մեր հաւատն ու յոյսը, որի արդիւնքում վերստանձնենք մեր բոլոր պարտականութիւններն ու պարտաւորութիւնները՝ անձնական, անհատական թէ հաւաքական, եւ արժանանալով Աստծու ողորմութեանը, գթութեանն ու ներողամտութեանը, ոչ թէ ականատես վկայ, այլ մասնակիցները լինենք մեր Եկեղեցու, Ազգի ու Հայրենիքի սրբակենցաղ յաղթական յարութեան՝ մեր ազգակիցների նկատմամբ մեր վերաբերմունքի փոփոխումով»:

Կիրակի՝ մարտի 31-ին, Ս. Յարութեան տօնի առթիւ սուրբ եւ անմահ պատարագ մատուցւեց Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եւ Ս. Յովհաննու Կարապետ, իսկ Շահինշահիր Սրբոց Վարդանանց եկեղեցիներում: Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աստուածածին եկեղեցու ս. պատարագին, որի պատարագիչ հայրն էր Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը:

Ընթացքում, քարոզախօսութեան փոխարէն, թեմական Առաջնորդ Սրբազան Հօր միջոցով ընթերցւեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը՝ տօնի առթիւ, որից ստորեւ մէջբերում ենք.

«Քրիստոսի յարութիւնը նաեւ պատգա՛մ է ուղղուած մեր ժողովրդին: Պատգամ՝ հաւատարիմ մնալու Քրիստոսի յարութեան խորհրդին եւ այն իրենց հաւատքի կեանքով ու առաքելութեամբ թարգմանած՛ մեր հայրերի սրբազան կտակին: Նաեւ հեռո՛ւ մնալու քրիստոնէական արժէքները նսեմացնող կենցաղակերպերից եւ գործելակերպերից: Հեռո՛ւ վանելու մեզ շրջապատող չարերն ու չարիքները: Պատգամ՝ մերժելու խաւարը եւ բացելու լոյսին, մերժելու վհատութիւնը եւ փարելու յոյսին, մերժելու մահը եւ կառչելու կեանքին: Արդ, սիրելի՛ հայորդիներ, իրար ողջունենք մեզ շրջապատող տագնապները հաւաքաբար յաղթահարելու յարութեան հաւատով: Իրար ողջունենք Քրիստոսի յարութեանը յաղթանակին մասնակից դառնալու յանձնառութեամբ, ինչպէս դարեր շարունակ մասնակից դարձանք Քրիստոսի Խաչի ճանապարհին»:

Վեհափառ Հայրապետի պատգամն ընթերցուել է նաեւ նշուած միւս եկեղեցիներում:

Թղթակից (Նոր Ջուղա)

Միջինքի տօնակարութիւն ՀՕՄ-ի Թաւրիզի կենտրոնատեղիում

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ - *Շորեքշաբթի, մարտի 6-ի երեկոյեան, ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ ու հրաւէրով, միութեան հաւաքատեղիում ի մի եկան անդամուհիները միասնաբար նշելու մեծ պահքի շրջանն կիսած յարտարարող աւանդական Միջինքը:*

Սոյն հաւաքին Պատգամաւորական ժողովի եւ թեմական խորհրդի անդամուհիներն ու ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղին օժանդակող տիկնայք:

Հաւաքի մասնակիցներին ողջունեց ու վարչութեան անունից շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի Անահիտ Մարգարեանն որ օրւայ խօսքով արտայայտուելու համար հրաւիրեց ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի բազմամեայ անդամուհի, եւ թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետուհի Արմինէ Վահրամեանին, որն իր հերթին իր բովանդակալից խօսքով անդրադարձաւ Մեծ Պահքին եւ այն կիսող Միջինքին, եւ մաղթեց, որ բոլորը բարով հասնեն Սուրբ Զատկւան ու տօնեն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Յարութեան Սուրբ տօնը:

Արմինէ Վահրամեանը առանձին խօսքերով անդրադարձաւ հայկական աւանդոյթները, ազգային եւ կրօնական տօները պատշաճօրէն նշելու ՀՕՄ-ի մեծ աւանդին, միութեան կրթական գործին, մշակութային աշխատանքներին, որոնք կատարւում են ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի յարկի ներքոյ ինչպիսին են տարբեր տօնական միջոցառումները, «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանը եւ «Տաթեւ» պարային համոյթը: Նա բարձր գնահատեց ՀՕՄ-ի վարչութեան ատենապետուհի Անահիտ Մարգարեանին եւ վարչութեան անդամուհիներին, ՀՕՄ-ի կրթարանի ուսուցչական կազմին, մանկապարտէզ-նախակրթարանի մշտական հովանաւոր՝ ազգային բարերար՝ Էլպիս Արզումանեան-Գասպարեանին, «Տաթեւ» պարային համոյթի գեղարուեստական ղեկավար ու բեմադրիչ՝ Կարինէ Մանուչերեանին եւ բոլոր նրանց, ովքեր միշտ կանգնած են ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի կողքին յանուն այդ հինաւուրց կառոյցի ազգանւէր գործի:

Արմինէ Վահրամեանը իր խօսքերի ընթացքում հրաւիրեց ՀՕՄ-ի անդամուհիների, որ իրենց մեներգներով ու ասմունքներով համեմեն կազմակերպած միջոցառումը: Մեներգներով հանդէս եկան Ռեբեկա Սարգսեան (Սուլթանեան), Ռեբեկա Սարգսեան (Ասատրեան) եւ Քարմէն Աբրահամեանը, իսկ ասմունքեցին Կարինէ Վարդանեանը, Անահիտ Մելիքեանն ու Նայիրի Դիլանեանը:

Միջոցառման ընթացքում նշուեց միութեան երէց անդամուհիներից Մանիկ Աբգարեանի ծննդեան 88-ամեակը, որն իր դստեր Կարինէ Գրիգորեան (Աբգարեան)-ի կողմից եւ ՀՕՄ-ի վարչութեան հետ համադրուած անակնկալ էր յոբելեարի համար, որն էլ մեծ խինդ ու միաժամանակ յուզմունք պատճառեց նրան, իսկ նոյն առիթով ՀՕՄ-ի վարչութիւնը յիշատակի նւէրով շնորհաւորեց միութեան երէցագոյն անդամուհուն:

ՀՕՄ-ի վարչութիւնը բարձր գնահատեց նաեւ միութեան «տնային խմորեղէնների վաճառք»-ին եւ «Հայկական խոհանոց»-ին իրենց օժանդակութիւնն բերած անձանց ու ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանի ծնողներին ու դրանց մէջ կատարեց վիճակահանութիւն, որի շահող յայտարարուեց Սեդա Շահնազարեանը:

Երեկոյի ընթացքում ճոխ հիւրասիրութեան կողքին ներկաներին հրամցուեց հայկական աւանդական գաթան, որպէս Միջինքի խորհրդանիշ, իսկ դրա բախտաւոր շահողն հանդիսացաւ Մարինա Բուդաղեանը:

Հանդիսութեան աւարտին օրւայ առիթով նկատի առնուած վիճակախաղը շահեց Սիլւա Աբրահամեանը:

Բոլորը այդ երեկոյ միմեանց կողքին եւ ՀՕՄ-ի յարկի տակ ապրեցին հաճելի պահեր եւ միմեանց հրաժեշտ տալով յոյս յայտնեցին, որ մի այլ առիթով կրկին առիթը կունենան վայելելու ՀՕՄ-ի հարազատ տունը:

ՀՕՄ-ի Ուրմիայի մասնաճիւղի Միջինքի հաւաքոյթը

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ - *Շորեքշաբթի, մարտի 6-ին, Ուրմիայի Ս. Ստեփանոս եկեղեցու «Արամ Մանուկեան» սրահում տեղի ունեցաւ ՀՕՄ-ի Ուրմիայի մասնաճիւղի վարչութեան կազմակերպած Միջինքի հաւաքոյթը, հովանաւորութեամբ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Շիֆթեանի:*

Հաւաքոյթը բացած համարուեց վարչութեան ատենապետուհի Սեդա Մեջլումեանի բարի գալըստեան խօսքով: Ատենապետուհին ընդհանուր գծերի մէջ ներկայացրեց Միջինքին վերաբերող տարբեր աւանդութիւններն եւ Մեծ Պահոց սովորութիւնները մեր ժողովրդի շրջանակներում, ապա շնորհաւորեց կանանց եւ գեղեկցութեան տօնը:

Ատենադպրուհի Լինէթ Հախվերդեան բեմը ստանձնելով, ընթերցեց առաջնորդ Սրբազան հօր ողջոյնի խօսքը: Սրբազան Հայրը յատկապէս շեշտել էր պահեցողութեան հոգեւոր եւ մարմնաւոր իմաստները, ինչպէս նաեւ իր գնահատանքը յայտնել վարչութեան՝ նրա ջանադիր աշխատանքների համար:

Գեղարուեստական բաժնում ամենայն հայոց բանաստեղծ եւ հասարարական գործիչ Յովհաննէս Թումանեանի 155-ամեակի առիթով, Ռուզաննա Մուրադեանի միջոցով ընթերցուեց նրա կենսագրութիւնը: Ասմունքներով հանդէս եկան Յօդիկ Մուրադեանը, Անջելիա Կարապետեանը եւ Սերինէ Առաքելեանը:

Հիւրերը երաժշտական քաղցր հնչողութեան եւ ազգային երգերի ունկնդրութեան ընթացքում հիւրասիրուեցին օրւան յատուկ գաթայով, պահոցի «կուտապ»-ով եւ պատառներով, ինչպէս նաեւ Միջինքի կարկանդակով:

Տեղի ունեցաւ նաեւ վիճակախաղ, որը պատճառ դարձաւ շահողների հրճւանքին. իսկ Միջինքի բախտաբեր կարկանդակի կոճակի նւէրը շահեց դպրոցի աշակերտուհի Քամելինը:

Սրտաբուխ մեներգներով եւ արտասանութիւններով հանդէս եկաւ Գեարդաբադ գիւղի ընկերուհիներից՝ Նորվարդ Անտոնեանը եւ Արծւիկ Մաջնունեանը. իսկ մօր մասին արտասանեց Նարինէ Բարբարեանը: Ինչպէս միշտ, սոյն հաւաքոյթի ընթացքում եւս կատարուեցին սրտաբուխ նւիրատուութիւններ ներկաների կողմից, որոնց համար ատենապետուհի Սեդա Մեջլումեանը յայտնեց իր շնորհակալութիւնը:

Հաւաքոյթի մասնակիցները ուրախ տրամադրբրութեամբ թողեցին սրահը, մօտ ապագային դարձեալ հանդիպելու քաղցր յոյսով:

Միջինքը տօնուեց «Ծերունի Գասպարեան» կրթարանում

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ- *Համաձայն ազգային, աւանդական, մշակութային ու կրօնական տօնացոյցի ամէն ուտումնական տարւայ ընթացքում ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանում կազմակերպւում են միջոցառումներ, որոնցից մէկն էլ Միջինքն է:*

Մարտի 6-ին, Հ.Օ.Մ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարանում, փոքրիկ սաները իրենց ուսուցչուհիների հետ նշեցին Միջինքը:

Հազիւ հասկանալով քառասնօրեայ պահեցողութեան իմաստն ու այն կիսող միջինքը, փոքրիկ աշակերտները սիրով սպասում են հայկական աւանդական գաթայի համտան, հասկանալու թէ իրենցից ո՞ր մէկի բաժնում է յայտնւելու բախտի նշանը:

Հետեւելով հայկական հին սովորոյթին աւանդական գաթան կտրելու համար այն ափսէյով տեղադրւեց մանկապարտէզի ամենափոքրիկ աշակերտ՝ Լէօ Ասատրեանի թիկունքին ու հատւեց, որից յետոյ իւրաքանչիւր աշակերտ ընտրեց իր բաժինն ու այն առնելով սկսեցին փնտրել մանրադրամը, բնականաբար ամէն մէկն հաւատալով, որ այն իր բաժնում պիտի լինի:

Միանգամից ուրախ բացագանչութեամբ նախակրթարանի աշակերտ՝ Ադրիել Աբդիշոյեանը յայտնեց թէ ինքն է բախտաւոր շահողը, միւս աշակերտները ծափերով շնորհաւորեցին իրենց դասընկերոջն ու բոլորն էլ մէկ առ մէկ ստացան իրեց ուսուցչուհիների կողմից պատրաստրւած նւէրները:

ՈՒՐԿԷ՞ ՀԱՍԱՆՔ, ԴԷՊԻ Ո՞ՒՐ – 4

ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ԱՆԴԻՆ «ԱՆԵԼԻՔՆԵՐ»

Քո Չարենցին լեզու տուող երկիր Հայաստան,
Հազար ու մի երգ ես տեսել,- էլի՛ կը տեսնես:
Ե. ՉԱՐԵՆՑ

Նախորդ սիւնակով փորձեցինք ուրուագծել այն նախադրեալները, որոնք ընդդիմադիր շարժումը կրնան աւելի՛ խոստմնալից գործի դաշտ նետել: Հոն, առաւելաբար կենտրոնացանք ներքին ոլորտի մարտահրաւէրներուն վրայ: Այս սիւնակով, փորձ պիտի կատարենք, նմանապէս ուրուագծային մօտեցումով, հասնելու Հայաստանի սահմաններէն անդին տարածուող աշխատանքի դաշտերուն, մի՛շտ շեշտելով, որ ներքին ու արտաքին ոլորտները անքակտելի ամբողջութիւն են, կը կարօտին բանիմաց մասնագէտներու եւ լաւ կապեր ունեցողներու ձեռքերուն միացման:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՄԻԱՒՈՐ ՉԷ

Մանրամասնութիւններու մէջ մրտնելէ առաջ, արձանագրենք քանի մը հիմնական կէտ. Հայաստան փորձաւնօթային սրւակի մը մէջ առանձինն երկիր չէ, այլ կը գտնուի աշխարհը փոթորկող, հետզհետէ սաստկացող հակամարտութիւններու մէկ կիզակէտին վրայ: Մեր հայրենիքը անհաղորդ չէ, չի կրնար անհաղորդ մնալ այն՝ առաւելաբար բացասակա՛ն, վտանգաւո՛ր իրադարձութիւններէն, որոնք տագնապներու մատնած են ամբողջ աշխարհը, սկսելով Ուկրաինայէն մինչեւ Գազա, Կարմիր ծովէն մինչեւ Աֆրիկեան երկիրներ (օրինակ՝ Սուդան, Եթովպիա, Ռուսիա-Ֆրանսիա հակամարտութեան դաշտ դարձած երկիրներ), հասնելով մինչեւ Կենտրոնական ու Հարաւային Ամերիկաներ, մինչեւ ասիական տարածքներ՝ Չինաստան ու Կորէաներ: Մեր ակնարկութիւնը չերթար միայն զինուորական ճակատումներուն, այլ նոյնքան կարեւոր, սակայն որոշ չափով քողարկեալ՝ տընտեսական մրցակցութիւններուն: Այլ խօսքով, Հայաստանի դեկը յանձն առնողը ատակ պիտի ըլլայ ո՛չ միայն յանձանձելու երկրին «տեղական» տագնապները, այլ նաեւ՝ աչքերը տարածելու աշխարհով մէկ, ըստ կարելւոյն ճիշտ դատողութիւններ կատարելու աշխարհակործան արհաւիրքները կըշռադատելու իմաստով, վերականգնէ՛ անցեալ գոնէ 30 եւ աւելի տարիներու՝ միջազգային տարբեր բեմերու վրայ եւ ոլորտներու մէջ աշխատանքներուն գիծերը, փորձառութիւնները, ճշտէ մեր շփոթահար նաւուն բռնելիք ուղղութիւնը: Անցնինք:

Արտաքին-դիւանագիտական յարաբերութիւններու դաշտին հայեցակէտով ալ պէտք է կրկնենք ճշմարտութիւն մը. Հայաստանի մէջ կան բոլոր մարզերուն մէջ իսկական մասնագէտներ, իմաստուն մարդիկ, որոնք կարողութիւնը ունին, մեր ճատրակի վարպետներուն հետեւողութեամբ՝ լուծելու մեր դիմաց կանգնող բարդ խնդիրները: Եւ այդ խնդիրներուն ամենէն աչքառու խորագիրն է՝ մեր հայրենիքի եւ ազգի շահերուն հիման վրայ յարաբերութիւններու, գործակցութիւններու պահպանումն ու վերամշակումը, պակաս մնացած կապերու համալրումը: Այլ խօսքով, անհրաժեշտ է թէ՛ Արեւելքի, թէ՛ Արեւմուտքի հետ հաւասարակշռութեամբ գործակցելու տրամաբանութեան ու գործի վերականգնումը: Դժուար առաքելութիւն, բայց ո՛չ անկարելի...

Հոս ալ կան օղակ առ օղակ լայնցող հարցեր ու գործի դաշտեր:

ԹՈՒՐՔԷՆ ՈՒ ԱԶԵՐԻՆ ԱՆՅԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՉԵՆ

Նախ շեշտենք, որ Հայաստան ունի մէկ հիմնական թշնամի՝ Թուրքիա-Ադրբէջան զինակցութիւնը, որ վերջերս ստին ճամբայ հանած է համաթուրանական հին երազը եւ գործակիցներ կը գտնէ հոս-հոն, նաեւ՝ Երեւանի մէջ...:

Վերջին տարիներուն, Հայաստանի մէջ, քաղաքական մեկնաբաններու բերնին մէջ ծամոց դարձած են քանի մը կիսատ ճշմարտութիւններ: Օրինակ, կրսի, թէ Թուրքիա եւ Ադրբէջան անյաղթելի են, խելացի վարմունք ունին թէ՛ զինուորական, եւ թէ՛ քաղաքական-դիւանագիտական գետիններու վրայ: Այս ճշմարտութիւնը կիսատ է, որովհետեւ նախ՝ Երեւանի այսօրուան իշխանութեան վարիչները չունին թուրքին ու ազերիին վերագրուած «իմաստութիւն»-ը, յետոյ, ո՛վ կրսէ, թէ Թուրքիան եւ Ադրբէջանը անվիճելի վարպետներ են քաղաքական դաշտին մէջ: Թող չըլլան անոնց ետին կանգնող ուժերը (զինուորական թէ տնտեսական հզօրանքներով), համաթուրանականութեան դրօշակիրները պիտի չկարենան իրականացնել իրենց նախահաշիւները (յիշենք, թէ ինչպէ՛ս փուլ եկաւ երբեմնի հզօր Օսմանեան կայսրութիւնը): Երբ Հայաստանի մէջ իշխանութեան գայ ՀԱՄԿՅՈՂՆԵՐՈՒ եւ ԿԱՐՈՂՆԵՐՈՒ խումբ մը, նման առաքելութիւն կը դառնայ հասանելի, որովհետեւ ներքին ու սփիւռքեան բոլոր բագուկները գործի պիտի լծուին համերաշխ լծակցութեամբ: Անգլերէն առած մը կրսէ. «Լաւ սկսած գործ մը կիսովին իրականացած կը սեպի» (Well begun is half done): Եւ մենք միակը չենք, որ ինկած ենք արհաւիրքներու ազդեցութեան տակ, ո՛չ ալ նման փորձի իմաստով նախընթացէ զուրկ ենք ու բացարձակապէս անփորձ...

Նոր վարչակազմը, կրկնենք, արտաքին դաշտերուն մէջ ալ գործելու պահուն, պիտի կարօտի ազգի ներուժին զօրակցութեան եւ գործակցութեան (կուսակցութիւններ, քաղաքական միաւորներ եւ համախմբումներ), իսկ անոր մշակելիք՝ լուծումներու ծրագիրը մէկ էջի վրայ պիտի բերէ բոլոր առկախ մեծ ու փոքր հարցերը, բացթողումները:

Դէպքերու վատ թաւալումը պատճառ դարձաւ, որ մեր հայրենիքին քաղաքական պահանջները իրողապէս մասնատուին, մէկ մասը տարբաղադրուի եւ ուրիշներ նետուին լուսանցքի, մինչեւ իսկ կամաւոր մոռացութեան տոպրակին մէջ: Արցախի դէմ ահաւոր պատերազմները՝ 90-ականներուն, 2016-ին, 2020-ին, 2023-ին, իսկ զուգահեռաբար Հայաստանէն ներս թափանցումները անպայման որ կիզակէտի պիտի վերածէին այս՝ անմիջական վտանգներն ու արհաւիրքները, անոնց հետեւանքները (հողի կորուստ, զոհեր, բռնագաղթի ենթարկուածներ): Հետեւանքներուն շարքին է այն, որ Արցախէն խըլլուած՝ Գետաշէնի ու Շահումեանի հարցերը դրուած էին սառնարան, հիւսիսային բեւեռի սառցակոյտերու ոլորտ ղրկուած էին Նախիջեւանը, Զաւախքն ու Արեւմտեան Հայաստանը՝ Սեւծովեան ելքով ու Կիլիկիայով միասին: Մեր պահանջատիրական գործին համար, անհրաժեշտ է այս ու նման հարցեր բերել մէկ էջի վրայ, մշակել անմիջական եւ հեռահաս ծրագիրներ, բայց մանաւանդ ինքնադարմանումի ենթարկիլ եւ հրաժարիլ այն «տրամաբանութենէն», որ Հայաստան հողային եւ այլ պահանջներ չունի Թուրքիայէն ու Ադրբէջանէն: Պահանջը կայ, գործի մարտավարութիւնը այլ հարց է:

Երբ ցեղասպանութեան ենթարկուած ես 1915-ին եւ 2023-ին, երբ պատմականօրէն քեզի պատկանող հողեր խլուած են քեզմէ, բռնագաղթի ենթարկուած ես... իմաստութեան ո՛չ մէկ նշոյլ կը մնայ այն կեցուածքին մէջ, թէ պահանջներ չունինք կամ կը ճանչնանք դրացիներու հողային ամբողջականութիւնը: Կարեւորը այն է, որ մեր քաղաքական մտածողութենէն, պահանջատիրական կամքէն մե՛նք դուրս չձրգենք ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ վերատիրացումը, իսկ թէ մեզ շրջապատող պայմանները, անյուսութիւն թելադրող զարգացումները պէ՞տք է խաւարի մատնեն նաեւ դրական նշոյլները՝ պատասխանը յստակ է: Անցեալին ալ, ամենէն անյոյս փուլերուն, ստեղծուած են վիճակներ ու պայմաններ, որոնք չերազուած դրական զարգացումներու հասցուցած են մեզ ու մեր հայրենիքը: Վերադառնանք «վառոդդ չոր պահէ» խօսքին:

Մեր քաղաքական պահանջատիրութեան նախադրեալներն ու անցեալի իրագործումները մէկ էջի վրայ հաւաքագրել՝ կը նշանակէ նաեւ մեր յիշողութեան մէջ վերաթարմացնել, վերակուտակել արդիւնքները այն վիթխարի աշխատանքներուն ու անոնց արդիւնքներուն, որոնք ձեռք բերուած եւ Հայաստանի անդրանիկ հանրապետութեան նախօրեակէն սկսել, կտրած են Հանրապետութեան փուլը (մասնաւորաբար Սեւրն ու նման ձեռքբերումներ), անկախութեան կորուստէն ետք տարուած վիթխարի գործը (Ազգերու Լիգա, ՄԱԿ, անհատ պետութիւններ, միջազգային հեղինակաւոր ատեաններ...), վերջապէս՝ վերանկախացումով բացուած փուլը (բազմաթիւ հանգրուաններով, որոնց թւարկումը անհրաժեշտ չենք նկատեր), Արցախի տագնապին ու մասնաւորաբար վերջին 3-4 տարիներու ձեռքբերումները, որոնք բաւական ամուր հիմ կը ստեղծեն հետագայի ամուր քայլերու:

Մտածող կայ, որ այդ բոլորը «թուղթէ շերեփ»-ի թղթածրարին մաս կը կազմեն: Ասիկա ճիշտ է կիսովին, որովհետեւ գիտենք, որ «երկաթէ շերեփ»-ը աւելի՛ կարեւոր է: Հետեւաբար, մեր քաղաքական-դիւանագիտական միտքին դիմաց կայ լուրջ մարտահրաւէր մը. ԻՆՉՊԷ՞Ս ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓՆԵՐԸ ՎԵՐԱԾԵԼ ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓԻ, առանց անտեսելու նոյնինքն երկաթէ շերեփը: Մեր իսկ փորձերը ցոյց տուած են, որ այս երկու շերեփները փոխադարձաբար զիրար կամբողջացնեն, մէկը միւսին յենարան է, պէ՛տք է ըլլայ, որովհետեւ միայն երկաթէ շերեփով բաւականացողը այսօրուան աշխարհին մէջ շա՛տ դիւրութեամբ կը շահի... ահաբեկիչ «տիտղոս»-ը:

ԱՄՈՒՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական-դիւանագիտական բազուկին դիմաց, կան անմիջական եւ հեռահաս հրամայականներ, որոնք կերկարին համարժէք գիծերու վրայ: Նշեցինք արդէն, որ կայ բարեկամներու հետ հաւասարակշռուած գործակցութիւն վերականգնելու մարտահրաւէրը, շեշտեցինք, որ բարեկամներու ցանկէն դուրս են ՄԻԱՅՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԸ, ո՛չ թէ անոր համար, որ ունինք պատմական հարցեր, այլ նա՛եւ անոր համար, որ իրե՛նք են իրենց կամքն ու նախապայմանները ուժով պարտադրել փորձողները:

Այս ծիրին մէջ ալ, պէտք է արձանագրենք այլանդակ կացութիւն մը, որ հետեւանք է այժմու իշխանաւորներուն ապիկարութեան ու ծանօթ «կախուածութիւններուն»: Հայաստան, մինչեւ վերջին քանի մը տարիները, ըստ բաւականին յաջողած էր ՀԱՒԱՍԱՐԱԿՀՇՌԵԱԼ յարաբերութիւններ պահել թէ՛ Արեւելքի, թէ՛ Արեւմուտքի հետ: Այդ օրերուն ալ երկու (կամ աւելի) առանցքներու միջեւ կային հակադրութիւններ, մրցակցութիւններ, սակայն հայկական քաղաքական միտքը ներկայէն շատ աւելի ճկուն ձեւով կը վարէր մեր նաւը: Ճիշտ է, որ Ուկրանիոյ տագնապը բոլորովին նոր դիմագիծ տուած է այդ հակամարտութիւններուն, սակայն պէտք չէ անտեսել այն իրականութիւնը, որ ամենէն սուր հակառակորդներն իսկ հիմա տեղ մը կը պահեն նւազագոյն գործակցութիւնը, կաշխատին չկտրել բարակցող թելը: Եւ ճիշտ հո՛ն է, որ մեզի պէս երկիրներու դիմաց կը բացուի խուսանաւելու հնարաւորութիւնը...: Սակայն ի՞նչ տեղի կունենայ ներկայիս: Հայաստան կաշխատի հեռաւորութիւն ստեղծել Ռուսիոյ հետ (պատճառները գիտենք), եւ ի հեռո՛ւկս բարեկամութեան այդ խաղաքարտին՝ կամուրջներ նետել կամ ամրապնդել այլոց հետ, որոնցմէ բոլորովին մեկուսացած չէինք: Հետեւա՞նքը (ո՛չ միակը): Ներքին բեւեռացումի վիճակ մը կը ստեղծի, ու չենք՞ անդրադառնար, թէ անկէ ինչպիսի՞ վնասներ կրնան հասնիլ (ի մտի չունինք անվաղորդայն խոստումներն ու բերանացի աջակցութիւնները): Ֆրանսիա զինական կազմածներ կը վաճառէ Հայաստանի, ու բանավէճ կը ստեղծի, թէ այդ զինատեսակները իսկապէս օգտակա՞ր են, պարսաւանքներ չեն խնայիր Ֆրանսային: Եւրոպացի դէտեր կը բերին Հայաստան (դարձեալ ի հեռուկս ռուսական եւ իրանեան կողմերու հաշուարկներուն), եւ յանկարծ եւրոպացիներուն դէմ քննադատական արշաւներ կը բարձրանան (չենք ըսեր, որ անտեղի են, սակայն...): Զէնքի գնման փորձ կըլլայ Հնդկաստանէն, եւ հոն ալ բանավէճ կը ստեղծուի ձեռք բերուածին-բերելիքին ազդեցութեան մասին: Ինչո՞ւ, որովհետեւ քիչ մը ամէն տեղ հարցերը կը տարին դէպի մասնակի քաղաքականացում, եւ ահա քեզի օգտակար ըլլալ ուզողն ալ կը դառնայ քննադատութեան թիրախ, մինչդեռ մենք պէտք ունինք աւելի՛ լրջախոհ մօտեցումներու- բարեկամութեան փոքրագոյն սանդխամատներն անգամ ամրացնելու: Ի՞նչ վնաս պիտի ունենար Հայաստան, եթէ Ռուսիոյ հետ նա՛եւ զինական գործակցութեան ոլորտին մէջ դէպի խզում չվազէր.... Ի՞նչ վնաս՝ եթէ կարենայինք զէնք ապահովել ո՛չ միայն յիշեալ երկիրներէն, այլ մինչեւ իսկ եւրոպական կամ արաբակա՛ն երկիրներէ, հաշուարկած եւ քաղաքականապէս հաւասարակշռուած ծրագիրներու հիմամբ, այնպէս մը, որ առնուած քայլերը վրդովմունք չպատճառէին ԲԱՐԵԿԱՄ դասուած երկիրներուն: Իսկ երբ նման հաւասարակշռութիւն վերըստեղծի՝ զէնքի առաքման ճամբաներն ալ դիւրին անցանելի կը դառնան, Թուրքիոյ եւ Ադրբէջանի խափանարար ճիգերը գործնապէս կը չէզոքացուին, բոլոր բարեկամները մեզ կը դիտեն այն յարգանքով, որուն արժանի է մեծ ու փոքր, հզօր կամ տկար որեւէ երկիր, ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՆԵՐՇՆՉՈՂ երկիր:

Վերը յիշատակուած առաջադրանքներուն իրականացման համար, յաջորդ վարչախումբը պէտք է գործի լծէ իրա՛ւ դիւանագէտներ, քաղաքական փոթորիկներ աւելի խելամիտ կերպով դիտող, վերլուծող եւ կապեր հաստատող, նոր կապեր ստեղծող մասնագէտներ: Երեւանի այսօրուան դիւանագիտական ցանցը մեծ չափով անգործ վիճակի մէջ է. ծանր դէպքեր կը պատահին, չես լսեր, որ այս կամ այն երկրին մէջ դիւանագիտական ներկայացուցիչդ ազդու գործ կընէ, ՓՈՐՁ ՄԸ ԿԸՆԷ, մինչդեռ դպրոցի մը ծորակներուն հարցը կը ստեղծէ փողոցամբուկով «համերգներ»:

Արտաքին՝ դիւանագիտական ոլորտին մէջ ճիշտ ծրագրումը – կրկնենք, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ ունինք բանիմաց եւ կշռադատող մասնագէտներ – նկատի պիտի ունենայ քանի մը հիմնական ստորոգելիներ, ինչպէս՝ որոշ աշխատանքներու մասին գաղտնապահութիւնն ու խորհրդապահութիւնը, նոյնը կը թելադրէ զինումի եւ բանակի վերակազմակերպման ոլորտը: Վերջին տարիներուն, երկու ոլորտներուն մէջ ալ անհարկի «բաց-պատարագ»-ներ կը ներկայացուին: Երեւանի նոր իշխանութիւնը վերջակէտ պիտի դնէ ինքնահակասումի եւ անիմաստ, որեւէ հիմք չապահովող համաձայնագրեր մէջբերելու անձնատուական երթին: Օրինակ, ինքնահակասում է մէկ կողմէ յայտարարել, որ Թուրքիա եւ Ադրբէջան ցեղասպանութիւն կընեն, Հայաստանի վրայ նոր յարձակումներ կը պատրաստեն (Նախիջեւանի մէջ նորագոյն զինավարժութիւնները՝ յաւելեալ վկայութիւն), ու միաժամանակ խօսիլ «խաղաղութեան մօտալուտ համաձայնագիր»-ի մը մասին (թուրքեւազերիական կողմը այդ մասին երազ ալ չեն տեսներ), կամ, տակաւին, կրկնել ու կրկնել, որ Հայաստան կուզէ խաղաղութեան հասնիլ Ալմա Աթայի համաձայնութեան հիմամբ, մինչդեռ ԿՐԿԻՆ ՈՒ ԿՐԿԻՆ ԱՊԱՅՈՒՅԻԱԾ է, որ այդ համաձայնագիրը ո՛չ մէկ կապ ունի նշուած առաջադրանքներուն հետ...: Հայաստան վիթխարի թղթածրարներ ունի, իր արդար իրաւունքները յիշեցնելու եւ այդ թղթածրարին ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ իր դաշտին մէջ խաղցընելու իմաստով:

Ահա այսպիսի՛ իշխանափոխութիւն մըն է, որ ընկալում պիտի գտնէ զանգուածին կողմէ, ու այդ յենարանով՝ ինքզինք եւ պահանջները աւելի՛ ազդու կերպով պիտի ներկայացնէ բարեկամներուն, նա՛եւ թշնամիին: Փոխընտրա՞նքը: Չենք ուզեր մտածել այն վատ նախատեսութիւններուն մասին, որոնց իրականացումը կը նշանակէ Հայաստանի ամբողջական կամ իրողական կորուստը, հայութեան աւելի՛ եւս նօսրացումը, Սփիւռքը յաւելեալ տկարացումի եւ բթացումի տանիլը: Կը հաւատանք, պէ՛տք է հաւատանք (սա զգացական մտածում չընկալել), որ հայ քաղաքական միտքը կրնայ այսօր իսկ շրջադարձի ենթարկել անարգել անկումը, վերականգնել անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը, իրակա՛ն ինքնիշխանութիւնը, եւ հայրենիքն ու ազգը ամրագրել աշխարհի քարտէզին վրայ, քայլ առ քայլ յառաջ տանիլ մեր անմիջական եւ հեռահաս պահանջները: Վերջին քանի մը տարիներու փորձերը փաստած են, որ այս՝ շրջադարձին իւրաքանչիւր ուշացում՝ աւելի՛ եւս կը ծանրացնէ յաջորդ փուլի գործերը:

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ
3-10 մարտի 2024

Երեւանն...

(Շար. 3-րդ էջից)

Հայաստանին տալ այն, ինչ կարող է տալ Երեւանը: Վերջին տարիներին Հայաստանի տնտեսութեան ուժեղ աճը պայմանաւորուած է եղել Եւրասիական միութեանը երկրի անդամակցութեամբ, ասել է Յակոբեանը, վերջին տարիներին Հայաստանում տնտեսական աճի տեմպերը «ամենասրընթացներից են եղել աշխարհում, իսկ Ռուսաստանի հետ առեւտուրը Հայաստանից արտահանումն աճել է կրկնակի եւ աւելի»:

Եւս մէկ կէտ. եթէ նախկինում Նիկոլ Փաշինեանը ՀԱՊԿ-ից պահանջում էր յստակեցնել սահմանների հարցը, ապա նա ստացաւ պատասխան, որ կազմակերպութիւնը Հայաստանում իր պատասխանատուութեան գօտին է համարում իր ինքնիշխան տարածքը՝ կարգաւորուած պետական սահմանների սահմաններում, առաջին հերթին՝ Ադրբէջանի հետ: Իսկ դա այժմ քննարկման առարկայ է Երեւանի եւ Բաքւի միջեւ:

Եթէ դա իսկապէս այդպէս է, ապա Բրիւսէլի գագաթնաժողովի շուրջ առկայ ողջ աղմուկն աւելի շատ «առեւտրային գործողութեան» նշաններ ունի, ինչը պոտենցիալ կերպով վերացնում է Հայաստանի խնդիրներն Իրանի, Թուրքիայի, մասամբ Ռուսաստանի հետ եւ նրա յարաբերութիւններն Ադրբէջանի հետ մտցնում այլ աշխարհաքաղաքական հարթութիւն: Բաքւի համար նեղանում է արեւմտեան ուղղութեամբ մանեւրելու տարածքը, եւ նրա համար աւելի դժուար կը լինի ուժի դիրքերից հանդէս գալ՝ չխախտելով միջազգային նորմերը:

Այո, Նիկոլ Փաշինեանը «խաղ» է վարում, փորձում է տարածաշրջանում որոշակի խընդիրներ ստեղծել Ռուսաստանի համար, կախւում է Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ՝ ուրիշներին պարտադրելով իր, այսպէս կոչուած, «ռազմավարական գործընկերութիւնը»: Ի պատասխան Մոսկուան, ինչպէս յայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախկին փոխնախարար, սենատոր Գրիգորի Կարասինը, «ուշադիր յետեւում է Երեւանից հնչող բոլոր յայտարարութիւններին»: Բայց չի բացառում, որ Հայաստանի ներկայիս արեւմըտամէտ կուրսն իրականում այն տարրն է, որով նա ակնկալում է որոշակի դիւիդենտներ ստանալ արեւմուտքում, իսկ Ռուսաստանի նկատմամբ ստիպել նրան փոխել իր քաղաքականութիւնն Ադրբէջանի նկատմամբ: Գաղափարն օրիգինալ է, բայց դրա իրագործումը պահանջում է լուրջ ռեսուրսներ եւ դիւանագիտական մեծ պատրաստածութիւն, որն այսօր Երեւանը չունի: Սակայն հետագայ զարգացումների վերաբերեալ եզրակացութիւններ անելը դեռ վաղ է:

Ստանիսլաւ Տարասով

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՍԱԹԵՆԻԿ ԲԱԲԱԽԱՆԵԱՆԻ (ՆԱՐԻՆԵԱՆ)

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, ապրիլի 5-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Միրուշ եւ Տիգրան Մինասեաններ՝ դուստրը եւ փեսան:

Սոնիկ Համբարձումեան՝դուստրը:

Միլա Շահբազեան՝դուստրը:

Ռոբերտ եւ Ռիտա Նարինեաններ՝ որդին եւ հարսը:

Էդմոնդ Ստեփանեան, Իւեթ Ստեփանեան՝ ընտանեօք, Ալէն եւ Սիրենա Մինասեաններ՝ ընտանեօք, Անաբէլ եւ Ռայմոնդ Քեշիշեաններ՝ ընտանեօք, Կարինէ Շահբազեան, Լէօ եւ Թիֆնի Նարինեաններ՝ թոռները եւ ծոռները:

Վարսիկ եւ Սիրվարդ Բաբախանեաններ՝ եղբայրների կանայք՝ զաւակներով՝ ընտանեօք:

Նւարդ Վարդանեան՝ քոյրը՝ զաւակներով՝ ընտանեօք:

Բաբախանեան, Նարինեան եւ Մոխթարի ընտանիքներ՝ հարազատները եւ խնամակալը:

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

Հանգուցեալի զաւակները իրենց շատ սիրելի մօր յիշատակին կատարել են նուիրատուութիւններ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



ՎՐԷԺ ԱՍԱՏՐԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, ապրիլի 5-ին, Ս. Թարգմանչաց եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում եւ «Նայիրի» սրահում (Զարքեշ):

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Հրաչիկ Զոհրաբեան՝ այրին:

Էդուին, Էդնա եւ Էդմոնդ Ասպրեաններ՝ զաւակները՝ ընտանեօք:

Ասպրեան եւ Զոհրաբեան ընտանիքներ՝ հարազատները:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Ռոզիկ, Ռուբիկ, Ռիմա, Ռազմիկ, Ռուբինա եւ Ռաֆֆի Տէր-Յովհաննիսեաններին, Տէր-Յովհաննիսեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ՀՐԱՆՏ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ ԵՒ ԱԼԵՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Արմոնդ Թահմազեանին, Թահմազեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ԱՐՇԱԼՈՅՍ ԹԱՀՄԱԶԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ



Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

Շնորհակալ ենք, որ Դուք կայք:

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵
فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷
چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Այսու անձնապէս եւ յանուն մեր Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրօնական խորհուրդների եւ ողջ ժողովականութեան խորազգաց ցաւակցութիւն ենք յայտնում՝ Տէր-Յովհաննիսեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ՀՐԱՆՏ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

Աղօթում եւ մաղթում ենք, որ Ասպուած Իր լոյսերի մէջ հանգչեցնի նորոգ հանգուցեալի հոգին եւ իր հարազատներին Ս. Հոգու մխիթարութիւն պարգեւի:

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
نمایندگی رسمی
هواپیمایی قشم ایر
QeshmAir
هواپیمایی آسمان
IRAN ASEMAN AIRLINES
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը, իսկ
սկսած ապրիլի 16-ից շաբաթ եւ երեքշաբթի օրերը
յաւելեալ թռիչքներ են կատարուելու
«Ասեման» աւիաընկերութեան միջոցով
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

«ԱՅՍ ՏԱՐԻԱՅ....

(Շար. 1-ին էջից)

տարայ կարգախօսը իրականացնելու նպատակով ելքեր գտնեն ժողովրդի գործակցութեան համար, ասել է. «Ժողովրդի բարօրութեան եւ երկրի առաջընթացի համար, ամէն մի ջանքը համարւում է աշխատանք յանուն Աստծուն»:

Իր ելոյթի այլ բաժնում այաթ. Խամենէին անդրադառնալով սիոնիստական ռճրագործ վարչակարգի երկու հիմական պարտութիւններին, թէ՛ «Ալաքս փոթորիկ» գործողութեան, եւ թէ՛ Գազայի դէմ յարձակման գծով, ընդգծել է. «Այս տարայ Ղոդսի օրը, յոյս ի Աստծու, Իրանի ժողովրդի եւ ազատատենչ ու մուսուլման ժողովուրդների խուռներամ մասնակցութեամբ, սիոնիստ օկուպանտ ռեժիմի դէմ վերածելու է միջազգային հուժկու յորձանուտի»:

Իր ելոյթի այլ բաժնում յեղափոխութեան առաջնորդը ընդգծեց, որ Գազայի կարեւոր հարցը պիտի մնայ աշխարհի հանրային կարծիքի ուշադրութեան կիզակէտում եւ անընախընթաց համարեց սիոնիստական ռեժիմի ռճրագործութիւնները, ինչպէս նրանց իրականացրած ցեղասպանութիւնը, կանանց, երեխաների, հիւանդների ու հիւանդանոցների վրայ գազանային յարձակումները եւ ընդգծեց, որ նրանց ռճրագործութիւնները այն աստիճանի էին, որ նոյնիսկ Եւրոպայում ու ԱՄՆ-ում, արեւմտեան մշակոյթով դաստիարակածները եւս իրենց բողոքի ձայնն են բարձրացրել սիոնիստների ռճրագործութիւնների նկատմամբ:

Այաթ. Խամենէին ընդգծել է. «Նրանք ցանկանում էին ոչնչացնել Դիմադրութիւնը եւ կոնկրետ ՀԱՄԱՍ-ը, մինչդեռ այսօր ՀԱՄԱՍ-ը, Իսլամական Ջիհադը եւ ընդհանուր առմամբ Գազայի Դիմադրութիւնը հանդուրժելով դժուարութիւնները, հարուածում է օկուպանտ ռեժիմին»:

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
Sati
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Սիստան Բալուչեստանի ահաբեկչական խմբաւորման ահաբեկիչները սպանուել են

«ԱԼԻՔ» - Ներքին գործերի նախարարութեան անվտանգութեան ու կարգապահական հարցերով տեղակալ Մէյէդ Մաջիդ Միրահմադին անդրադառնալով Չաբահար եւ Ռասք քաղաքներում «Ջէյշ օլ զոլմ» ահաբեկչական խմբաւորման կատարած յարձակմանը ասել է, որ այդ յարձակումը հարիւր տոկոսով ձախողուել է:

ԻՌՆԱ-ի համաձայն՝ այդ մասին նա ընդգծել է, որ սպանուել են 15 ահաբեկիչները եւ բոլոր այն ահաբեկիչները որոնք թաքնուել էին բնակելի մի տան մէջ կատրելապէս շրջափակուել են: Նա նշեց, որ նահատակուել են անվտանգութեան 11 պաշտպաններ:

Սիստան Բալուչեստան նահանգի նահանգապետի անվտանգութեան ու կարգապահական հարցերով տեղակալը ընդգծել է, որ Իրանի զինուած ուժերի անմասնցորդ ջանքերի շնորհիւ ահաբեկիչների ձեռքից ազատ են արձակուել այն գերեվարուածները, որոնց ահաբեկիչների գերի էին վերցրել իրենց պատսպարուած բնակելի տան մէջ:

Աւանդական Ջահերով երթն այս տարի կը մեկնարկի Հանրապետութեան հրապարակից

Աւանդական ջահերով երթն այս տարի եւս կը մեկնարկի Երեւանի կենտրոնից՝ Հանրապետութեան հրապարակից: Տեղեկութիւնը յայտնում է ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միութիւնը:

Երթը կը սկսուի ապրիլի 23-ին՝ ժամը 19:15-ին:

«Ինչպէս նախորդ տարիներին, այս տարի եւս բոլոր ցանկացողներին հնարաւորութիւն կը տրուի երթին մասնակցել որպէս ջահակիր: Անհարժեշտ է առցանց յայտադիմում լրացնել»,- ասուած է հաղորդագրութիւնում:

Նշենք, որ ՀՅԴ ՀԵՄ անդամները երթից առաջ աւանդաբար այրում են Թուրքիայի եւ Ադրբէջանի դրօշները: Դրանից յետոյ հազարաւոր մարդիկ ազգագրական երգերի ուղեկցութեամբ քայլում են դէպի Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ:

ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միութիւնը երթը կազմակերպում է ամէն տարի 1999 թւականից ի վեր:

Հարցուածների 87,5 տոկոսը դէմ է Տաւուշի վերաբերեալ Փաշինեանի գործողութիւններին

«Վարչապետ Նիկոլ Փաշինեանը առաջարկում է Ադրբէջանի եւ Հայաստանի միջեւ սահմանազատումը իրականացնել փուլային եւ նախատեսում է սկսել Տաւուշի մարզից, ինչը նշանակում է 4 բնակավայրի՝ գիւղերի անկլաւների փոխանցում Ադրբէջանին: Որքանո՞վ է այս մօտեցումը Ձեզ համար ընդունելի»,- այս հարցն է տրվել ՀՀ քաղաքացիներին:

Պատասխանները բաշխուել են հետեւեալ կերպ.

- *Միանշանակ ընդունելի է – 2,9%*
- *Աւելի շուտ ընդունելի է – 6,0%*
- *Աւելի շուտ ընդունելի չէ – 7,8%*
- *Ընդհանրապէս ընդունելի չէ – 79,7%*
- *Դժուարանում եմ պատասխանել – 3,6%*

Նշենք, որ հարցումն իրականացրել է «GALLUP International Association»-ի Հայաստանում լիիրաւ անդամ Էմ Փի ՋԻ ՍՊԸ-ն՝ 1101 քաղաքացուց՝ մարտի 27-29-ը:

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի....

(Շար. 1-ին էջից)

տարածքում:

Կովկասի հարցերով փորձագէտ դոկտ. Էհսան Մովսիսեանը կարեւորելով հանդիպման ձեւաչափը նշել է, որ նման հանդիպումը նոյնիսկ համահունչ հոսանքների հետ առագաստ ուղղած կողմերին է յուզել, ինչպիսին ՆԱՏՕ-ի ոտքը տարածաշրջան բացած Բաքուն է: «Սակայն պէտք է յիշեցնել, որ 2023-ի տարեվերջից, Հայաստան-ԱՄՆ բանակցութիւնները շարունակւում են միջուկային էներգետիկայի շուրջ համաձայնագրի կնքման համար, այսպէս կոչուած «123-համաձայնագիր» անուան տակ: ԱՄՆ-ը եւ Եւրոմիութիւնը մտադիր են նաեւ աջակցել Հայաստանին «կանաչ» էներգիայի անցման ծրագրին, Փարիզի համաձայնագրի պայմաններով վերականգնող էներգիայի զարգացմանն անցում կատարելու համար, որտեղ ներդրումներ են կատարուելու արեւային եւ հիդրոէլեկտրակայանների կառուցման նախագծերում: Իսկ սա վկայում է այն մասին, որ Ռուսաստանի կողմից լարուածութեան աճի դէպքում Երեւանին տալու են այլընտրանքային հնարաւորութիւն՝ էներգակիրների մատակարարման ընդհատմանն ի պատասխան»,- յիշեցնելով համաձայնագրերի մասին գրել է փորձագէտը եւ յաւելել, որ նոյն էներգետիկ անվտանգութեան խոստումների ներքոյ Վաշինգտոնն ու Բրիւսէլը պահանջելու են Մեծամօրի ատոմակայանը շահագործումից հանել:

Մովսիսեանը յոլում անելով իրազեկ աղբիւրներին նշել է, որ հաւանաբար այս հանդիպմանը Արեւմուտքը խոստանայ՝ նոր ատոմակայանի կառուցման համար (ԵՄ-ից եւ ԱՄՆ-ից) տրամադրուեն տեխնոլոգիա, սարքաւորումներ եւ ֆինանսական միջոցներ: «Բացի այդ, Փաշինեանի կառավարութիւնը շահագրգռած է Հայաստանում էներգակիրների պահեստաւորման եւ մոդուլային միջուկային ռեակտորների տեղադրմամբ»,- նշել է փորձագէտը:

Կիբեր-անվտանգութեան եւ հիբրիդային սպառնալիքների, գիւղատնտեսութեան, տարածաշրջանային տնտեսական եւ ենթակառուցային նախագծերին մասնակից դաձնելը, վիզաների ազատում, բիւջետային աջակցութիւնները, ռազմական համագործակցութիւնները, եւ նոյնիսկ արագցած ռեժիմով պարտքերի ներումը լինելու են այն խթանիչներն ու առանցքները, որոնցով Արեւմուտքը փորձելու է Հայաստանը պոկել ռուսական անվտանգային գոնից,- նշել է փորձագէտը, եւ եզրակացրել, որ այդպիսով փորձ է արուելու իրականացած տեսնել Հայաստանը Արեւմտեան բլոկ տեղափոխելու ծրագիր՝ Վրաստանում Վարդերի յեղափոխութեանը յաջորդած ծանր պատմութեան օրինակով:

Արժէ յիշեցնել, որ խոստումների ցուցակում աչքի են ընկնում նախագծեր, ինչպիսին Սեւծովեան էներգետիկ փոխադրումների ստորջրեայ հոսքագիծն է, կամ Սեւծովեան լայնաշերտ հաղորդակցական ցանցին միացումը, որով աճելու է Հայաստանի կախուածութիւնը՝ այդ երկիրը երեք տասնամեակ շրջափակման մէջ պահած՝ Թուրքիայից: Միաժամանակ Հայաստանը կորցնելու է հետաքրքրութիւնը բնական դաշնակիցների համար, ինչն էլ առճակատման դէպքում՝ Հայաստանը դարձնելու է մարտադաշտ՝ սահմանամերձ գիւղի կարգավիճակով:

Փորձագէտը յիշեցնելով ժամանակակից պատմութեան դէպքերն ու դեռ շարունակող հակամարտութիւնների հիմնապատճառների մասին, եզրակացրել է, որ այս կերպ Հայաստանը բռնելու է Ուկրաինա դառնալու ճանապարհը: «Վտանգաւոր խաղադրոյք, որը կարող է յանգեցնել տարածաշրջանի ապակայունացմանը, արժանանալով Մոսկւայի ու Թեհրանի, կամ նոյնիսկ Բաքւի ու Անկարայի սուր արձագանգին, որոնք ուշադիր հետեւում են նման անցուդարձերին: Այս գործընթացը կարող է յանգեցնել Հարաւային Կովկասում նոր բաժանարար գծերի ստեղծմանը»,- եզրակացրել է դոկտ. Էհսան Մովսիսեանը: